

ԱՂԲԻՒՐ յաւելուած ՏԱՐԱԶԻՆ № 282

Լոյս է տեսնում շաբաթը մի անգամ կիրակի օրերը

№ 2 կիրակի յունուարի 14 | տասնեւերկուերորդ տարի 1901

Բացուած է 1901 թ. բաժանորդագրութիւնը. *Տարազի* տարեկան գինը 6 ր. ամսական 50 կ.

XIX ԱՂԲԻՒՐ XIX և XII ՏԱՐԱԶ XII

Մի համեմատ պատկերազարդ հանդէս մանուկների, ծնողների եւ դաստիարակների համար:

Պատկերազարդ շաբաթաթերթ ընտանեկան ընթերցանութեան համար:

Կըհրատարակուեն նոյն ուղղութեամբ և աշխատակիցների մասնակցութեամբ:

Աղբիւր-Տարազի տարեկան բաժանորդագրութիւնը յաւելուածով եւ պրեմիայով **10** րուբ. է, արտասահման **18** ր., կամ **50** ֆր.

ՊԱՐՈՒԶԻ ՄՈԴԱ, ԻՒՂԻՒՍՏՐԱՑԻՕՆ, ՐՈՄԱՆՉԳԱՀԿԱՆ, գեղանի փառակազմ **ՕՐԱՑՈՑՑ** տացնում են ԱՂԲԻՒՐ-ՏԱՐԱԶԻ միեւնոյն հասցեով տացող բաժանորդները

Աղբիւրի տարեկան գինը **3** րուբ. *Տարազինը* **6** ր.:

Հասցէ՝ Тифлисъ, редакція иллюстр. жур. АГБЮРЪ-ТАРАЗЪ կամ *Tiflis* (Caucase) Réd. des jour. Agbur et Taraz

ԱՌԱՔԱՆԵՑԻՔ

XIX-ԴԱՐ

Եր ամեն ձեռնարկութեան յաջողութեան գլխաւոր մի պայմանն է ժամանակի խնայողաբար գործածութիւնը. նրա ինչ եղանակով կլրանալութիւնից երևում է թէ ինչպէս ենք վերաբերում մենք դէպի բարոյական օրէնքները, որոնք պահանջում են մեզնից՝ ժամանակից օգտուել մեր պարտքերը կատարելու և մեր Հոգեկան կատարելագործութեան համար: Մարմնական և Հոգեկան կարողութիւնների և ընդունակութիւնների նման և հաւասար՝ ժամանակն էլ մի Աստուածատուր անդին պարգև է: Ուստի մենք պարտաւոր ենք խնայողաբար ի կիր ածել մեր տրամադրութեան տակ գտնուած ժամանակը և չվատնել նրան ունայն, աննպատակ և անշահ:

Բոլոր ժամանակների փիլիսոփաները և բարոյագէտները միաբան յիշեցնում են մեզ մեր կեանքի կարճատևութիւնը, ժամանակի արագ անցնելը և նրան խելացի կերպով գործ ածելու անհրաժեշտութեան մասին. սակայն այդ խորհուրդ տալը կամ յիշեցնելը սովորաբար քիչ արդիւնք է տալիս: Եւ տակաւին հիմա էլ նշանաւոր են Սենեկայի հետևեալ խօսքերը՝ «մեր մի քանի ժամերը խլում են ոմանք մարդիկ, մի քանիսը վատնում ենք զուր,

այլք անցնում են մեզ համար անհնատելի. բայց ժամանակի ամենամեծ կորուստը առաջանում է մեր սեպհական անհոգութիւնից. խորամուխ լինելով հեշտ է նկատել, որ մեր կեանքի մի նշանաւոր մասը գնում է սխալանքների, մեծագոյն մասը սահում է անդորձութեան մէջ և մեր կեանքը անցնելով, երբեմն, տեսնում ենք՝ որ մենք չենք արել այն, ինչ որ պետք էր: Ջատ քիչ արդեօք այն մարդկանց թիւը, որոնք ժամանակին որևէ արժէք են տալիս, շատ են, որոնք թանգ գնահատեն իրանց օրերը և ըմբռնեն, որ օրը օրին իրանք մեռնում են. մեր զառանցմունքն հէնց այն է, որ մենք ենթադրում ենք թէ մահը ապագայի բան է, մինչդեռ ամեն վայրկեան մենք մրտնում ենք մահուան գիրկը, ուստի օգտի համար աշխատենք գործ անել ամեն մի ժամ: Այս էլ կայ, որ այսօրուայ ձեռք բերած շահով, մենք շատ անկախ ենք լինում վաղուան վերաբերմամբ. ամեն ինչ ուրիշի է և օտար, միայն ժամանակն է մեր սեպհականութիւնը. բնութիւնը մեզ տւել է միայն այս վաղանցուկ և անհաստատ սեպհականութիւնը, և որն ըղդ պահին ամեն ոք ով կամենայ, կարող է մեզ զրկել նրանից:

Մարդիկ իրանց պարտաւոր են համարում իրաքանչիւր ստացած նւէրի համար, որչափ էլ նա աննշան լինի և ունին հնար փոխադարձ յարգինք անելու, բայց ոչինչ արժէք չեն տալիս ուրիշի ժամանակին, որի կորածը ինչքան էլ ցանկանան, չեն կարող յետ դարձնել»:

Ժամանակն է այն մլակ բարիքը, որի վերաբերմամբ մենք պիտի ժլատ լինինք: Եւ սակայն, ամենից քիչ նրան ենք գնահատում, առանց ցաւելու փչացնում ենք նրան և թոյլ ենք տալիս, ով ցանկայ, խլէ նրան մեզանից. շատերի համար երևում է նա մի ծանր բեռն, որից ամեն կերպ ճգնում են պրծնիլ, միտք չանելով, որ ժամանակը ինքը մեր կեանքն է, քանի որ օգտակար կիր առած ժամանակն է միայն տալիս մեր կեանքին իսկական արժէքաւոր պարունակութիւն. եթէ ժամանակն է կեանքի ամենաթանգագին բարիքներից մէկը, ուստի նրան անպէտք կորցնելն է ամենավատ շռայլութիւն: Յաճախ մենք գանգատւում ենք թէ ժամանակ չունինք, բայց իսկապէս շատ անգամ ոչ թէ ժամանակն է սակաւ, այլ թէ կամ մենք չենք կարողանում նրանից կանոնաւոր օգտւել կամ այնքան կամքի ոյժ չունինք, որ մեզ ստիպենք իր ժամանակին կատարել որոշ գործ կամ որևէ մեր մի պարտաւորութիւնը: Ոմանք մարդիկ աշխատելով ամեն կերպ որ «սպասենք ժամանակը», ինչպէս ասում են, զարմանալի է, որ միևնոյն ժամանակ գանգատւում են թէ կեանքը կարճ է: Սակայն մեր կեանքը բաւական երկարատև կրթւալ մեր երկրաւոր կեանքի խորհուրդը կատարելու, եթէ մենք ինքներս չկրճատէինք մեր կեանքը, զուր վատնելով մեր ժամանակը. Մարդուս կեանքի սահմանը համարւում է եօթանասուն տարին, ամբողջ կազմածք ունեցողների համար ութսուն տարին, ինչպէս ասում է Սաղմոսը, ՀԹ. Ը. «ժամանակ ամաց մերոց անդադար որպէս և ոտրպի թիւ աւուրց ամաց մերոց ի նոսա եօթանասուն ամ. ապա թէ առաւել և՝ ութսուն ամ և որ ինչ աւելի է քան զայն՝ ցաւօք և հիւծութեամբ»:

Եւ այն միջոցին էլ աւելի կարճ կերևայ, եթէ նրանից որոշենք այն ժամերը, որոնց անցուցել ենք գատարկութեամբ, անօգուտ գործերով, կարծեցեալ ուրախութեամբ, կեղծ վշտով և ապարդիւն զրոյցներով: Ով կարողանում է գնահատել ժամանակի արժէքը և լիուլի օգտւել նրանից, նա երկարացնում է իր գոյութեան ժամանակամիջոցը. ժամանակն է այն բաներից մինը, որ միայն մի անգամ կարելի է գտնել. վասն զի այս օրը անցնում է անդարձ և այլ և այս յետ չի դառնալ, ուստի չը պիտի թողնել վաղուան այն բանը, որ կարող ենք այսօր անել. չենք կարող իմանալ ինչ արգելքներ և դժբախտութիւններ կրծագեն վաղը: Ով կամենում է խնայել ժամանակը իր համար, նա պիտի թանգ գնահատէ իւրաքանչիւր օր և անտեղի չը կորցնէ սահող ժամանակի ժամերը յոյսը դնելով ապագայի վրայ, որ մեր իշխանութեան տակ չէ:

Պէտք է փոքրից վարժւել ժամանակի հետ խնայողաբար վարուելու. դրա անհրաժեշտ պայմանն է կարգ և կանոնաւորութիւն զբաղմունքների և առտնին կեանքի մէջ. ժամանակի պարտ ու պատշաճ կիրառութիւնը միայն այն չէ, որ նրան զուր չը վատնենք, այլև այն է, որ օրւայ ամեն մի մասը գործ ածենք նրա համար, ինչի որ նա նշանակուած է: Ամեն մի գործի պէտք է որոշել յարմար ժամանակ՝ համաձայն մեր պարտաւորութեան և կեանքի դրած պայմանների, և ոչ թէ ինչպէս որ պատահի. «ամեն բան իր ժամանակին և ամեն ինչ իր ժամանակն ունի երկնքի տակ»: Իւրաքանչիւր դէպք բնութեան մէջ և ամեն գործ մարդկային կեանքի մէջ իր կատարման համար պահանջում է ժամանակի որոշ միջոց, սահմանուած գործի կամ դէպքի հանգամանքների համեմատ: Մեր ուսումնասիրական և կամ այլ զբաղմունքներին և պարտա-

ւորութիւններին պէտք է նւիրենք օրւայ մէջ որոշ ժամեր և մի սնգամ գծած կարգին խստութեամբ պիտի հետևենք, վարժւելով կատարել ինչ որ մեր պարտքն է և ժամանակի խելացի տնտեսութիւնը շատ նպաստող են մեր յառաջադիմութեան և մեր գործերի յաջողութեան։

Սխալ կըլինէր կարծել թէ աճապարելը ժամանակի խնայողութիւն է. ընդհակառակն շտապելը ընդհատում, անկանոն, ձանձրալի և դժուն է դարձնում աշխատանքը. ամեն գործ պիտի յառաջ վարել նախամտածած ծրագրով, մինչդեռ վռազիլը թոյլ չի տալ լաւ ամեն կողմից դատել և լրիւ իրականացնել գործը. պատշաճաւոր չափի վարժւելով՝ կարելի է այն գեղեցիկ սովորութիւը ձեռք բերել, որով ոչ աճապարել տեղի կունենայ և ոչ դանդաղել։ Վերջապէս պէտք է կանոնաւորութիւն պահպանել և աշխատութեան մէջ, զբաղմունքն ու հանգստութիւնը կարգին փոխանակելով. արդ, դառնանք Ա֊ենակալ Ատծուն, որ իր իշխանութեան տակ ունի ժամը և ժամանակը, որ իր օրհնութիւնը մեզ աջակից լինի ամեն ժամանակ։

Նիկողայոս վարդապետ S. Աւետիքեան

Հ Ի Յ Ն Ի Յ

(Ազատ. թարգմ.)

—

Ե՛րբ, ըո կարմիր-վարդ թշերըդ
Վառուղ ամառ կերևան.
Բայց քնքուշիկ ըո սրտիդ մէջ
Ցուրտ ձմեռ է, ըուք-ըորան...
Եւ կըզայ օր՝ ցուրտ ձմեռը
Կըտիրէ ըո այտերիդ.
Իսկ հրակէզ վառ ամառը
Կիշխէ փափուկ ըո սրտիդ...

Արտաշէս Դարիբեանց

ՏԱՍՆԻՆԵՐՈՐԴ ԴԱՐԸ

I

XIX դարն ամբողջ աշխարհի և մանաւանդ Եւրոպայի համար քաղաքական և սոցիալական փոփոխութիւնների դար է եղել։ 1814 թ. սկսած բոլոր պետութիւնները էլ ձևափոխել են իրանց ներքին կամ արտաքին կազմը։ Ամեն տեղ (բացի Անգլիայից, Ռուսիայից և Շւեցիայից) այդ երևոյթը կայացել է շնորհիւ յեղափոխութեան կամ ներքին երկպառակութիւնների, որոնց նպատակն է եղել ոչնչացնել դասակարգային արտօնութիւնները, կեանքի անարդար պայմանները և ձգտել դէպի հաւասարութիւն, անհատական ազատութիւն։ Այդ ձգտումն արտայայտել են սկզբում գաղտնի ընկերութիւնները, ապա լեգալ կուսակցութիւնները։

Գաղտնի ընկերութիւններից ամենաառաջինը կարելի է համարել «Փրանմասոնութիւնը», որի նշանաբանն էր արձարձել հոռանիտար գաղափարներ և դաւանանքի կատարեալ ազատութիւն, ոչնչացնելով եկեղեցա֊հոգևորականութեան բռնապետութիւնը։ Այդ ընկ. XIX դարի սկզբում դարձաւ մէջազգային, տարածւեց գրեթէ ամեն տեղ (նոյն իսկ Ռուսիայում) և անդամներ գրաւեց բարձրաստիճան, նոյն իսկ թագակիր անձերից։ 1814 թ. կազմակերպւեցին յունական „հետերիաները“, որոնց գործողութեամբ Յունաստանն անկախութիւն ձեռք բերեց։

1820 – 30 թւականներում սկսւեց խիստ հալածանք Փրանմասոնութեան դէմ, որ և կամաց֊կամաց աներևոյթացաւ, տեղի տալով մի նոր ընկերութեան—աւելի թարմ, աւելի կենսունակ լոգէլներով տոգորւած «Երիտասարդ Եւրոպային»։ Դրա հիմնադիրն էր իտալացի յայտնի հայրենասէր Մաձինին, որը մի քանի անյաջող ապստամբութիւններից յետոյ աշխատում էր պրոպագանդայի միջոցով նախապատրաստել յեղափոխութիւն և ձեռք բերել Իտալիայի միութիւնը։ «Երիտ. Եւր.» չուտով ունեցաւ մի քանի սեկցիաներ—Երիտասարդ Փրանսիա, Գերմանիա, Լեհաստան և այլն։ Դրանից իւրաքանչիւրն ունէր իր տեղական նպատակը, բայց միևնոյն ժամանակ ամենքը պատրաստ էին հարկաւոր դէպքում օգնել միմեանց։ «Երիտասարդ Եւրոպան» բարոյական ազդեցութիւնից զատ ուրիշ դրական արդիւնք չունեցաւ և տեղի տւեց սոցիալական (և ոչ ազգային) յեղափոխութիւն քարոզող տարրին որ աւում էր թէ՝

ա) Հասարակութիւնը գաժանաբար է վարւում չունևորների վերաբերմամբ. իր անտարբերութեամբ սաստկացնում է վերջիններիս դառնութիւնները, առանց ըմբռնելու, որ իւրաքանչիւր անհատ ունի դոյութեան իրաւունք։

բ) Հասարակութիւնը կազմակերպւած է ոչ այնպէս, ինչպէս արդարութիւնն է թելադրում։ Սեպհականութեան, ժառանգութեան իրաւունքները մարդկանց բաժանել են երկու անհաւասար դասակարգերի։ Աշխատում է գիւղացին—վայելում է կալւածատէրը, տնքում է բանւորը—արդիւնքը ճաշակում է կապիտալիստը։ Ուստի և անհրաժեշտ է վերացնել այդ չարաբաստիկ պայմանները, մարդկանց տալ հաւասարութիւն, իւրաքանչիւրին իր աշխատանքի համրողջ արդիւնքը վայելելու իրաւունքով։

Այդ գաղափարները զանազան կոմբինացիաներով արծարծել են Սեն Սիմիոն, Ֆուրիե, Լուի Բլան, Րոբերտաս, Լասսալ, Մարլօ, Էնգելս և Կարլ Մարկս, որի եռահատոր պատկառելի աշխատութիւնը «Կապիտալ» անունով, դաւանագիրք է դարձել այժմեան սոցիալիստների համար.

Սոցիալ յեղափոխութեան կողմնակիցները սկզբում հայածանքի ենթարկուեցին, բայց նրանց գաղափարները արծարծուեցին բոլոր պետութիւնների մէջ, հետզհետէ ապելացնելով նրանց կևրէտների—պաշտպանների թիւը: Սմեն տեղ օրինական և ոչ օրինական քննութեան բանակուի նիւթ դարձաւ երկրի կառավարչական և սոցիալական կազմը, առաջ եկան որոշ ծրագրով, որոշ ուղղութեամբ կազմակերպւած կուսակցութիւններ, որոնցից գլխաւորներն են*).

I) Պահպանողականներ, որոնք բաղկացած են բարձրր աստիճանաւորներից, հողատէր արիստոկրատներից և ցանկանում են աբսալիւտ կառավարութիւն առանց կոնտրոլի, իշխող հոգևորականութիւն, խիստ ցենզուրա և այլն:

2) Սահմանադրականներ, (մորիներ, աջակողմեան կենդրոն) որոնց անդամներն են բարձր բուրժուաներ, ազատամիտ աստիճանաւորներ: Այդ կուսակցութեան իդէալն է սահմանադրական միապետական կառավարութիւն՝ երկու պալատից (մէկը արիստոկրատական, միւսը ընտրողական) բաղկացած պարլամենտով:

3) Ազատամիտներ (վիգեներ, ձախակողմեան կենդրոն) որոնք բաղկացած են բուրժուա անդամներից և պահանջում են սահմանադրականների նման երկու պալատ, սակայն սրանք—առաւելութիւնը, գերիշխանութիւնը տալիս են ոչ թէ թագաւորին և արիստոկրատների պալատին, այլ բուն ժողովրդին, այսինքն ընտրւած պալատին:

Բացի դրանից ազատամիտները պահանջում են նաև ընդարձակ սահմանադրութիւն, մամուլի, ամեն տեսակ ընկերութիւնների, ժողովների և կրօնների լիակատար ազատութիւն:

4) Սոցիալ-դեմոկրատներ. սրանց հետևողներն են՝ ուսանողներ, բանւորներ, փաստաբաններ, հրատարակիչներ և այլն: Դրանք պահանջում են կատարեալ հաւասարութիւն, ընդհանուր ձայնաւորութեան իրաւունք, դասակարգային արտօնութիւնների ոչնչացումն և այլն:

Վերջին ժամանակներում թէ այդ (4) և թէ միւս մանր կուսակցութիւնները այլ և այլ հարցերում կոմպրոմիս աներով ձգտում են կենդրոնացնել, միացնել ոյժերը, որոնցով ի վերջոյ կազմելու են երկու միմեանց արմատապէս հակառակ կուսակցութիւններ՝ պահպանողական և դեմոկրատական (ռամկավարական):

Բացի այդ ներքին էվոլիւսիօնից, որ արդիւնք է դասակարգային մրցման, XIX դարում մեծ դեր է խաղացել նաև ազգերի մրցումը ֆիզիքական կոպիտ ոյժի—պատերազմի միջոցով XIX դարի պատերազմները մարդկութիւնից 15,000,000 իւ աւելի զոհեր են խլել, այն է.

Նապոլէօնի պատերազմները (1799—18.5) 8 000,000 Ղրիմի պատ. (1854) 800,000. Ֆրանս.-պրուսական պատ. 300,000. իտալական պատերազմներ 300,000, Հիւս. Ամերիկ. պատ. 5000 000 1870 թ. պատերազմը 800,000 Ռուս.-Թրքակ. պատ. 500,000, դաղութների պատ 3,000.000 և այլն:

Այդ միայն մարդկային զոհերն են, հապա ՈՐքան վնաս են առաջացել տնտեսական և բարոյական տեսակէտից:

Եւրոպայի քաղաքական առաջադիմութեանը մեծ զարկ են տւել երեք դէպքեր.

ա) 1830 թ. Ֆրանսիական յեղափոխութիւնը, որ քանդեց եւրոպական պետութիւնների դաշինքը և մտցրեց կառավարելու պարլամենտական ձև:

բ) 1848 թուականի յեղափոխութիւնը, որ կազմակերպեց սոցիալ և կաթոլիկ կուսակցութիւնները և գործնականութեան մէջ մտցրեց ընտրողական իրաւունքը:

գ) Ֆրանս պրուսական պատերազմը, որը ստեղծեց հզօր Գերմանիային, տալով նրան ագդու դեր եւրոպական կոնցերտում և ամրապնդեց սպառազինման միջոցով խաղաղութիւն պահպանելու սիստեմը.

Այդ սիստեմն է որ այժմ միլիոններէ կլանում իւրաքանչիւր պետութեան ծախսերից: Իրրև ապացոյց բաւական է յիշել այն իրողութիւնը, որ նոյն իսկ խաղաղ ժամանակ գինւորական ծախսերից իւրաքանչիւր անհատի հասնում է միջին թւով Ֆրանսիայում $9^1/_2$ րուբլի,*) Գերմանիայում—$7^1/_2$ րուբ., Անգլիայում—8 րուբ., Ռուսիայում—4 րուբ. և այլն:

Ըստ հասկանալի է որ այդպիսի մեծաքանակ ծախսերի պատճառով աւելանում են պետական պարտքերը: Իւրաքանչիւր եւրոպացի աշխարհ է գալիս միջին թւով 140 ր պարտքով: Թէև XIX րորդ դարի ընթացքում մի քանի անգամ փորձեր են արւել պատերազմների առաջն առնելու, անարդար արիւնահեղութիւնը վերացնելու համար. սակայն այդ բոլոր փորձերն անցել են ապարդիւն խաղաղութեան կոչերը մնացել են «ձայն բառբառոյ յանապատի»:

* Синебосъ „Политическая исторія Европы".

* Д. Нордэнъ. „Итоги XIX вѣка"

Թ. Ե.

ԿԱԼԷՅԴՈՍԿՈՊ

(Մոսկւայի մեր յատուկ թղթակցից)

—

Հեռագիր Մարս մոլորակից.—Լոյսի մի գիծ.— Երկու ամիս այդ հեռագրին պատասխանելու:

—

Դեկտեմբերի 8-ին ամբողջ աշխարհի ուշադրութիւնը գրաւեց ամերիկական Արիզոնա կանտոնից հասնող մի ցնցող հեռագիր: Այդ նահանգում կայ Ֆլագստոֆի մեծ դիտարանը (օբսերւատուար), ուր աստղագէտ Դուլգաս փորձւած գիտնականը, յայտնի իր բազմաթիւ հետախուզութիւններով, ամսիս 8-ին, Մարս մոլորակի վրայ նկատել է նորօրինակ նշաններ:

Դեկտեմբերի 8 ին գիշերը, այդ աստղագէտը, երբ դիտելիս է եղել Մարսի վրայ գտնւող ծովերից մէկը, յանկարծ տեսնում է մի շարք պայծառ լոյսեր, որոնք ուղիղ գծով շարւած են միմեանց կողքի և մի քանի հարիւր կիլոմետր տարածութեամբ: Այդ հսկայական պայծառ գծերը վառւել են աւանց ընդհատման ճիշտ մի ժամ և 10 րոպէ և յետոյ չանկարծ, սաստիկ արագութեամբ հանգել են, ոչ կամաց կամաց, այլ կտրուկ կերպով:

Որքան յայտնի է, լոյսը երբէք երկրայինական ձևերով չէ տարածւում: Մարսի մէջ երևող այդ ուղղագիծ լոյսերը նշան են կամովին գործունէութեան: Բացի դրանից, լոյսի չանկարծական երևումն և չանկարծական անհետանալը հաստատում է, որ մարդկային, որոշ դեկավարների ձեռք կայ այդտեղ գործող:

Այդ նոյնը պնդում են ոչ միայն աստղագէտ Դուպլասը, այլ և շատ դիտնականներ։ Հետևապէս հաստատ է, որ այդ արարածները ոչ միայն աւելի յառաջադէմ են գիտութեամբ, այլ որ նրանք գիտեն մեր գոյութիւնը, և հեռագրական նշաններով աշխատում են հաղորդակցել մեզ հետ։

Բայց մենք երկար չենք մնայ անորոշութեան մէջ. անշուշտ այժմ, աշխարհիս բոլոր աստղադիտական դիտարաններից սկսել են նայել Մարսին և եթէ ճիշտ է, որ Մարսեցիք կամենում են հաղորդակցել մեզ հետ, անշուշտ պիտի կրկնեն նոյն նշանները։ Մարսը այժմ քայլում է իր հանդէպ և կըհասնի միայն փետրուարի 22-ին. ուրեմն ամբողջ երկու ամիս ժամանակ կայ դիտելու և մի որոշ եղրակացութեան հասնելու։

Մարսը շատ բարձր լինելով հորիզոնի վրայ, շատ լաւ դիրք ունի և գնները նրան շատ յարմար է մանաւանդ ձմերնային պարզկայ գիշերով։

Ուրեմն, եթէ իսկապէս Մարսի բնակիչներն են այդ լոյսը գոյացնողները, հարկ է ուշադրութիւն դարձնել և մտածել նրանց հասկացնելու որ մենք տեսնում ենք այդ նշանները։ Եթէ յաջողի այդ ևս, այն ժամանակ անշուշտ մեր երկրի և Մարսի մէջ կըհաստատուի մի հաղորդակցութիւն նըշաններով։ Եւ ինչքո՜ր չի յայտնագործուիլ արդեօք այդ բոլորից։

Դեկտ. 8-ին Մարսային հեռագիրը հաղորդած է բոլոր դիտարաններին, բոլոր յայտնի աստղագէտները այժմ զբաղած են դրանով. գիտական և այլ թերթերը լի են այդ դէպքի նկարագրութեամբ։

Այս բոլոր տեղեկութիւնները մենք քաղեցինք Ֆրանսական «La Nature» գիտական հանդիսից և «Le Matin» թերթի յատուկ թղթակցի հաղորդածներից։ Ռուսական թերթերն էլ սկսել են զբաղուել այդ կարևոր խնդրով։ Ռ

Գեղարուեստ

Զուդերմանի նոր դրամա

Այս ձեռնում, տեղիս «Լեսսինգ թատրոնի» ամենագլխաւոր նորութիւնն է տաղանդաւոր դրամատուրգ Զուդերմանի Iohannisfeuer դրաման, որի ներկայացումը միշտ էլ խուռն բազմութիւն է գրաւում։

Դէպքը պատահում է Հարաւային Գերմանիայի փոքրիկ գիւղերից մէկում, որտեղ ապրում է Փոգելրեուտերի հարուստ ընտանիքը՝ բազկացած ծնողներից և մի հատիկ աղջկանից Տրուդայից։ Նրանց տանը ապրում է նոյնպէս Փոգելրեուտերի քրոջ որդին՝ Գէորգը, որը ծնողներից զրկուած լինելով, որդեգրուած էր նրանցից։

Գէորգի վրայ նայում էին, իբրև Տրուդայի ապագայ փեսացուի վրայ։ Նրանց տանը մնում էր նաև Մարիկկէն գող մուրացկան կնոջ աղջիկը։ Մարիկկէն արդէն չափահաս է. տան ամբողջ տնտեսութիւնը նրա ձեռին է, ոչ մի բան առանց նրա գիտութեան չի կատարուում։

Գէորգը թէպէտ Տրուդայի վեսացուն էր համարուում, սակայն սիրում էր Մարիկկէին և նրա համար ոտանաւորներ էր գրում իսկ Տրուդային նա համակրում էր իբրև անմեղ, մաքուր երեխայի։

Նա իր ուսումը վերջացրած՝ վերադառնում է գիւղ։ Փոգելրեուտերը ուզում է իր ցանկութիւնը իրագործել, այսինքն Գէորգին և Տրուդային պսակել։

Մարիկկէն պատահմամբ կարդում է Գէորգի տետրակը, որի մէջ իրա մասին ոտանաւորներ էր գրած և այդպիսով իմանում է, որ Գէորգը իրան է սիրում և ոչ Տրուդային։

Մարիկկէի սիրտը մի բան է փընտրում, կարծես մի բան պակաս է նա կարծում է, թէ դա մայրական սէրն է իր մէջ զարթնել և նա խնդրում է Գէորգին մօրը բերել։ Վերջինս կատարում է նրա ցանկութիւնը և բերում է մօրը։ Բայց որքա՜ն մեծ է լինում խեղճ աղջկայ հիասթափումը, երբ տեսնում է, որ իր մայրը պատառոտած շորերով մուրացիկ կին է, մանաւանդ երբ վերջինս նրա ներկայութեամբ գողանում է սեղանի վրայ դրած սպիտակեղէնը։

Հասնում է Iohannisfeuer-ը (դա հին ժամանակներից մնացած գերմանական տօն է)։

Երեկոյ է։ Դրսում մարդիկ տօնում են Iohannisfeuer-ը։ Մարիկկէն յուզուած դրութեան մէջ է, վաղ առաւօտեան նա պիտի գնայ Գէորգի նոր բնակարանը կահաւորելու, որովհետև այդ օրը տեղի է ունենալու Գէորգի հարսանիքը։ Այդ ժամանակ նրա զգացմունքները աւելի պարզուած էին. նա արդէն համոզուած էր, որ սիրում է Գէորգին, որ վերջինս էլ նրան է սիրում։ Բայց ի՞նչ օգուտ, նրանք երկուսն էլ բարերարուած են Փոգելրեուտերից. ուրեմն ի՞նչպէս կարող են նրան գժգոհութիւն պատճառել, Տրուդայի ամուսնութիւնը քանդելով. չէ՞ որ դա կըլինի ամենամեծ ապերախտութիւն։

Ո՛չ, Մարիկկէն այդ քայլը չի անի... Նա հէնց այդ երեկոյ սրտի կսկիծով ընդունում է պաստոր Հաֆֆկէի առաջարկութիւնը, կարծելով, թէ այդպիսով դոնէ նրան կըբախտաւորեցնէ։ (Պաստորը վաղուց սիրում էր նրան)։ Սակայն անարատ սէրը գժբաղդութիւններից չի վախենում. Մարիկկէն նորից տեսնում է Գէորգի հետ. այս անգամ արդէն բացարձակ կերպով յայտնում են միմեանց փոխադարձ սէրը. վճռում են արհամարհել կողմնակի արգելքները և ընդմիշտ բախտաւոր ապրել միասին։ Մարիկկէն նորից խօսում է պաստորի հետ և յետ է վերցնում իր խօսքը։ Բայց շուտով զարթնում է Մարիկկէի երախտագիտական զգացմունքը։

— Ո՛չ, դա անհնարին է, ասում է նա Գէորգին, դրանով անմեղ Տրուդայի կեանքը կըդառնանայ և մեր բոլորների ամբողջ ընտանիքը կըդժբախտանայ... Մնաս բարով Գէորգ, մեր կեանքի ճանապարհները ընդմիշտ բաժան կըմնան...

Գէորգը հաշտւում է Մարիկկէի վճռին և հէնց նոյն առաւօտը պսակւում է Տրուդայի հետ։

Դրանով վերջանում է դրաման, որի նպատակն է կարծես ցոյց տալ, թէ երախտագիտութիւնը սիրուց ուժեղ է։ Եթէ այդպէս չըլինէր, մի՞թէ Գէորգը կըթողնէր իր սիրեցեալ Մարիկկէին և կամուսնանար Տրուդայի հետ, այն Տրուդայի, որին նա չէր սիրում և երեխայ էր համարում։

Սակայն այստեղ հարց է առաջ գալիս. մի՞թէ լաւ վարուեց Գէորգը... արդեօք կարող էր նա առանց սիրոյ բախտաւորեցնել Տրուդային և դրանով մխիթարութիւն պատճառել նրա ծնողներին...

Բերլին 5 յուն. **Որ. Հրաճեայ**

ԱՆԴԼ. ԹԱԳՈՒՀԻ ՎԻԿՏՈՐԻԱ

—

Քսաներորդ դարը ծանր օրեր բերաւ Անգլիայի համար։ Չէնց նոր դարի արշալոյսը չբծագած՝ ամսոյս 9-ին Օսբորնում վախճանեցաւ Անգլիայի և Իրլանդիայի թագուհի, Հնդկաստանի կայսրուհի Վիկտորիա առաջինը։

Վիկտորիա թագուհին կենտի հերոյոգի դուստրն էր և լաւ կրթութիւն էր ստացել Նորտումբերլանդեան հերոյոգուհու ձեռքի տակ. նա բարձրացաւ Անգլիայի գահը իր անժառանգ հօրեղբօր Վիլհելմ դ. մահից յետոյ 1837 թ. և 1840 թ. ամուսնացաւ իշխան Ալբերտի հետ, որից ունէր իննը զաւակ։ Վիկտորիա թագուհին մեզմ բնաւորութեան տէր էր և երբէք թոյլ չէր տալիս իրան իր երկրի սահմանադրական կանոնների վրայ ճնշումն գործել։

Նրա օրով Անգլիան թէ գիտութեան և թէ առևտրի և արդիւնաբերութեան կողմից մի բարձր դիրք բռնեց։ Նոյնպէս օրից օր զարգացող քաղաքական կեանքը ընդարձակեցին Անգլիայի իշխանութիւնը՝ Աւստրալիայում, Ասիայում և Աֆրիկայում և բարձրացրին երկրի դիրքը եւրոպական տէրութիւնների մէջ։

Հանգուցեալ թագուհին կապւած էր խնամիական կապերով Եւրոպայի իշխող թագաւորական տների հետ և իր երկրի մէջ շատ սիրելի էր և մեծ ժողովրդականութիւն էր վայելում։

—

Անգլիայի նոր թագաւորը

—

Վիկտորիս թագուհու մահւանից յետոյ Անգլիայի գահն է բարձրանում նրա մեծ որդին, Ալբերտ Էդուարդը, որը ծնւել է 1841 թ.։

Այժմեան Մեծն Բրիտանիայի թագաւորի ուղղութեան և քաղաքական հայեցակէտի վերաբերութեամբ ոչ մի որոշ բան չէ կարելի ասել, որովհետև նա բացարձակ դեռ չէ խառնւել իր երկրի ներքին քաղաքականութեան մէջ և միայն օգնում էր այս և այն կրթական և բարեգործական հիմնարկութիւնների առաջադիմութեանը։ Դժւար է ասել, թէ նոր գահակալը ինչ դիրք կբռնէ քաղաքական աշխարհում, թէպէտ յայտնի է, որ Անգլիայի կառավարչական սիստեման առանձին ազատութիւն չէ ընծայում տիրող թագաւորի անձնական ուղղութեանը։

Ալբերտ թագաւորը ամուսնացած է Դանիայի թագաւոր Խրիստիան Թ. ի դստեր Ալէքսանդրինի հետ։ Նրա թագաժառանգն է իր մեծ որդին՝ Ալբերտ-Վիկտորը, որ ծնւել է 1964 թ.։

—

ՄԱՀՓՈՅԺ

Եսայի արեպ. Տէր-Եսայեան

—

Ամսոյս 8-ին Թիֆլիսում կնքեց իր մահկանացուն Ջամախու թեմական առաջնորդ Արքեպիսկոպոս Եսայի Աստւածատրեանցը։ Հանգուցեալը իր կրթութիւնը ստացել էր էջմիածնի ժառանգաւորաց դպրոցում։ Բացի մի քանի տարի Սինոդի անդամի պաշտօն վարելուց, նրա գործունէութիւնը իբրև ժողովրդի սիրելի հովիւ՝ անց է կացել Անգլիայի և Հնդկաստանի մէջ, ուր նա եպիսկոպոսութիւն ստանալուց յետոյ Հնդկաստանի և Պարսկաստանի թեմական առաջնորդի պաշտօն էր կատարում։ Արհին, լաւ իմաստասիրած լինելով անգլիերէնն լեզուն, թարգմանել է հայերէնից հայոց եկեղեցու արարողութիւնները։ Անցեալ տարւանից ի Տէր հանգուցեալ Եսայի Արքեպիսկոպոսը վարում էր Ջամախու թեմական առաջնորդի պաշտօնը. Սրանից մի քանի տարի առաջ նա ընծայեց Ներսիսեան ու. սումնարանին 6000 ր. յօգուտ չքաւոր աշակերտների կրթութեան։

Թաղումը տեղի կունենայ այսօր, Վանքի բակում։

—

Բարձրագոյն շնորհներ

—

Ագամանդեայ նշաններ Ս. Ալէքսանդրի սկու Կովկասի ժողովրդական մասի կառավարչապետ գեներալ-ատիւտանտ իշխան Դ. Ս. Գալիցինին։

Ս. Ալէքսանդր Նևսկու շքանշանը Կովկասեան 1-ին զինւորական դնդի զօրապետ գեներալ-լեյտենանտ իշխան Ամիրաջիբին։

Ս. Ստանիսլաւի ա. աստիճանը Ղարսի զինւորական նահանգապետ գեներալ մայոր Սամոյլովին, բացի նահանգապետ գեներալ մայոր Օգինցեւին, Թիֆլիսի դատարանական պալատի դատախազի ընկեր ի. պ. խ Խլոդկովսկուն, դատարանական պալատի անդամ ի. պ. խ. Դոբրովին, Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահի ընկեր ի. պ. խ. Բուրլսգարթին։

Ս. Աննայի ա. աստիճանը Թիֆլիսի կոմենդանտ գեներալ մայոր Ռեյտերին։

Ս. Վլադիմիրի բ. աստիճանը Կովկասի զինւորական շրջանի ճարտարապետների կառավարչի օգնական գեներալ մայոր Տարասենկովին, Կովկասի զինւորական շրջանի զօրաց մօտ նշանակւած գեներալ մայոր Դրոզդովիչին։

Ս. Վլադիմիրի գ. աստիճանը գլխաւոր կառավարչապետի կանցելեարիի դիրեկտոր ի. պ. խ. Սանդրիգայլոյին, Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահ ի. պ. խ. Ջարիգինին, Թիֆլիսի նահանգական դատարանի նախագահի օգնական ի. պ. խ. Սաւիցկուն։

—

Պարագաներ

Լրագրները տեղեկացնում են, որ Պ. Եանովսկու նախաձեռնութիւնը պարապող առանձին մասնաժողովը արդէն աւարտել է իր գործը միջնակարգ դպրոցների ուսումնական մասբարեփոխութեան վերաբերութեամբ։ Ինչպէս գրում են «Նովոստի» միջնակարգ դպրոցների մէջ լատինը սկսելու են գ. ից, իսկ յունարէնը դ. դասարանից։ Այդ լեզուների նիւթած ժամերը բաւականին կրճատւած են։ Ուժեղացրած է ռուսաց լեզուի պատմութեան—առաւելապէս հայրենիքի, աշխարհագրութեան և բնագիտութեան դասաւանդութիւնը։ Երկու նոր լեզուներ (երևի գերմաներէն և ֆրանսերէն) պարտաւորական են դառնում։ Պահպանւում են միայն ընդունելութեան և աւարտման հարցաքննութիւնները, բացի այդ թոյլ աշակերտներին քննելու են միայն այն առարկաներից, որոնց մէջ նրանք տկար են երևացել։

—

Գրական նորութիւններ

—

Ամսոյս 12-ին լոյս տեսաւ Մուամսագրի առաջին համարը, որ կ

մաճ է բազմաբովանդակ: Հանդիսի դիրքը փոխաճ է. տպագրութիւնը շատ մաքուր է: Նոր խմբագրութեան շուրջը նոր աշխատակիցներ են խմբուած:

Հրատ Ցուրութիւններ

Խնդիր է առաջարկած ուր պէտք է, Պետերբուրգում ամենօրեայ հայե. րէն թերթ հրատարակելու թոյլտուութեան համար:

ՍԱՀՄԱՆ ԹՄՄԵՐ

Նորին Վեհափառութիւն Սբր-բազնագոյն Կաթողիկոսը ամսոյս 11-ին Ղարսի երկաթուղով առաւօտեան գնացքով ժամանեց Թիֆլիս: Նորին Օծութեան երկաթուղու կայարանում պիտաւորեցին Թեմիս ս. առաջնորդ Սուրէնեանց արքեպիսկոպոսը, Անանիա եպիսկոպոսը և այլք:

—Ակէ բանդրապոլից մեզ գրում են, որ Ամենայն Հայոց Կաթողիկոսը ժամանեց այստեղ յունուարի 4-ի առաւօտը. Ճրագալոյցի երեկոյեան ամսոյս 5 ին ներկայ եղաւ պատարագին տեղիս ամենամեծ եկեղեցում (ս. Փրկիչ), որտեղ լի էր ժողովրդի բազմութիւն, իսկ հետեւեալ օրը՝ ամսոյս 6-ին—ս. Աստուածածնայ եկեղեցուց պատարագից յետոյ՝ հանդիսաւոր և շքեղ թափորով տեղի բոլոր քահանաների դասով—և բազմաթիւ ժողովրդեան ուղեկցութեամբ Ամենայն հայոց Կաթողուղիկոսը ս. Խաչը առաջնորդեց ս. Փրկչի եկեղեցին—որտեղ դուրսը՝ եկեղեցու արևմտեան դռան առջև պատրաստած տախտակամածի վրայ ջրօրհնեաց հանդէսը մեծ շուքով կատարեց:

—Յայտարարուած է փինանսների նախարարի ամենահպատակօրէն զեկուցումը տէրութեան 1901 թ. ել և մտի մասին: Սովորական տէրութեան եկամուտ. 1,730,096,002 ր. արտակարգ 1,500,000 ր., տէրութեան գանձարանի ազատ ներկայ գումարը 56,886,000 ր., ընդամենը 1,788,483,006 ր: Տէրութեան ծախսերը. սովորական 1,656,652.556 րուբլի. արտակարգ 131,829,450.ընդամենը 1,788,482,006 րուբլի. ամենամեծ աւելուն եկամուտի սպասում է խմիչքների արքունական վաճառումից 51,000,000 ր: Սովորական ծախսեր ենթադրուած է 1900 թ աւելի 92 210,877 րուբլով:

Վերջին կոնտրոլից երևում է, որ մինչև 1900 թ. յունուարի 1 ը «առաձեռն ազատ» գումարը կազմում էր 259,3 մլ. անցեալ 1900 թ. ձեռնարկութիւնները աւելացնում են առձեռն ազատ գումարը 129.1 մլ րուբլիով: Դժւարին 1900 թ. Յունիան անց է կացրել ոչ միայն առանց փոխառութեան, այլ և պահելով բաւականին մնացորդ, որ ներկայացնում է ֆինանսական աչքի ընկնող յաջողութիւն: Ոսկու ներկայ եղած գումարը հասնում է 807,8 մլ. ընթացիկ շարժող ոսկու գումարը 684,5 միլիոնի, թղթադրամի գումարը պակասել է մինչև 552,3 մլ. այսպիսով 1892-ից մինչև 1898 թ. ոսկու գումարը աւելացել է 422,8 մլ. րուբլիով. իսկ ընթացիկ շարժողութեան մէջ մտցրած է ոսկով 149,3 մլ. իսկ շարժողութեան մէջ եղող թղթադրամը պակասեցրած է 196,8 մլ.

—Ներկայ 1901 թ. Արքունական խորհրդարանի նախագահ հաստատուած է Մեծ Իշխան Միխայիլ Նիկոլաևիչ:

—Նորին Կայսերական Մեծութեան Կայսրուհի Ալէքսանդրա Փեոդորովնայի Օգոստափառ հովանաւորութեան տակ գտնուող աշխատասէրների հոգաբարձութեան կասսայի առ ձեռն գումարը հասել է 1,013,972 ր. 41 կ., այս գումարից անձեռնմխելի 615,624 ր. 1 կ., ծախսելու նշանակուած 243,939 ր. 82 կ. և մասնաւոր նշանակութիւն ունեցող գումար 154,409 ր. 57 կ.

—Ամսոյս 8-ին կատարուեց ընտրութիւն քաղաքային վարչութեան անդամի, փոխանակ հեռացող իշխան Ա. Մ. Արղութեան - Երկայնաբազուկի: Վերջինս վերընտրուած է 30 ձայնի բազմութիւնով ընդդէմ 1-ի նոյն ժողովում գոմշի և խոզի մսի գինը պակասցրած է 1 կոպէկով:

—Ամսոյս 8-ին պ. Բոբրին ներկայացրեց Թիֆլիսի քաղաք. վարչութեանը Փունիկուլեօրի շինութեան տեխնիքական նախագիծը:

—Ինչպէս լսւում է, գարնան կրսկսի շինել երկաթուղու ճանապարհը Ամուր գետով Բլագովեսչենսկի վրայ. ճանապարհը կանցնի Ամուրի աջ կամ ձախ ափով և դուրս կգայ Ուսսուրեան ճանապարհի վրայ. նրա երկարութիւնը կլինի մօտ 1000 վերստ:

—Թիֆլիսի քաղաքային կրեդիտական ընկերութեան կանոնագրութիւնը լրացրած է նոր 93 դ յօդուածով, որ թոյլ է տալիս ընկերութեանը կատարել յարացուցիչ փոխառութիւն արդէն գրաւ դրած կալքերի մէջ նոր կառուցած շինութիւնների գրաւականով, առանց առաջուան փոխառութեան կրկնագրաւի:

Սրանից անկախ ֆինանսների նախարարը թոյլ տւեց նոյն ընկերութեանը նորոգել 5% օբլիգացիաների լոյս ընձայումը:

—Երևանի ճիւղի երկաթուղու գծի շինութիւնը այնքան յաջող է առաջ գրնում, որ ենթադրում են, թէ մինչև սեպտեմբեր ամբողջ գծի վրայ կարելի կլինի շարժել մշակատար գնացքներ:

—Քաղաքային վարչութիւնը վճռել է հիմնել երկու ուսումնարանական բժիշկների պաշտօն:

—Երկրագործութեան նախարարութեան մէջ մշակւում է ծրագիր գիւղատնտեսական ուսումնարաններին նոր վերակազմութիւն տալ:

—Յունուարի 1-ից նոր կանոն է մըտցրած. փոստով 1000-ից մինչև 2000 ր. փոխադրելու համար վճարելու է 2 ր. 50 կ., իսկ 2000 ր. աւելի իւրաքանչիւր րուբլուց 1/8 կ.:

Խառն Լուրեր

Սպանիայում բազմաթիւ մունեցիպալետներ (քաղ. վարչ.) վճռել են ներկայ յունուարի 1-ին ծնած տղաներին ազատել զինուորական ծառայութիւնից, իսկ աղջիկներին բաժինք տալ: Նոր տարուց մտադիր են մտցնել ժամերի 24 և ոչ 12-ի հաշիւ:

—Սուլթանի իրադէով կազմակերպւում են նոր հեծելազօր գնդեր: Այդ գնդերը կազմելու են քրդերից և Կովկասից գաղթած լեռնացիներից: Սրանց զինաւորելու են ճիշտ այնպէս, ինչպէս Ցերսկի կազակներն են զինաւորուած և հագնուած:

—Միացեալ-Նահանգներում շրջում է մի բողոքագիր, որ արդէն բազմաթիւ ստորագրողներ ունի. ահա այդ քաղաքի բովանդակութիւնը: «Մենք ներքոյ ստորագրեալներս Միացեալ-Նահանգների քաղաքացիներ, բողո-

քում ենք այն անդուսպ արիւնհեղութեան և աւերումների դէմ, որ ըսպառնում են Տրանսւաալ և Օրանժ հասարակապետութիւններին և շեշտելով աղաչում ենք Մեծն Բրիտանիայի, Իրլանդիայի, Նոյնպէս և կոլոնիաների ազգաբնակութիւնից մերժել պաշտպանութիւն ցոյց տալու տէրութեան քաղաքականութեանը, որ չէ կարող տալ անդլիական ազգին ոչ նիւթական շահ և ոչ փառք»։

—Պոլսից Բերլին դեսպանութիւնն է ուղարկած սուլթանի նամակը կայսեր յանձնելու համար։ Կարծում են թէ այդ նամակի մէջ բացի հաղորդատիրակալութիւնից գծի և արտաքին գործերի մասին խօսելուց, խօսք կայ և այն վտանգի մասին, որ սպառնում Տաճկաստանին, եթէ Ժանտախտը տարածւի երկրի մէջ։ Այդպիսի դէպքում տաճկաց տէրութիւնը իրան բոլորովին դործելու անընդունակ է համարում։

—Ինչպէս լսւում է, տաճկապարսկական սահմանի վրայ, քրդերի ջոփ ցեղը յարձակւել է պարսկական կերմանի գաւառը և այնտեղ հրդեհներ և աւազակութիւններ է գործել։ Այժմըս պարսից դեսպանը պահանջում է վնասւածներին վարձատրել և կարգաւորել տաճկապարսկական սահմանդիծը։

—Որսաց դեսպան Գիրսը բողոքում է անգլիացոց վարմունքի դէմ, որոնք չեն թոյլ տւել ռուսներին բրինձ և ցորեն բաժանել չինական զօրքերին, անգլիացիների գրաւած քաղաքամասի մէջ։

—Ֆ. Դուռը կրկին անգամ պատւիրել է ամենախիստ կերպով արգելել օտարերկրացի հրէաներին Պաղէստանում բնակութիւն հաստատել և անշարժ կայքեր ձեռք բերել, միևնոյն ժամանակ նրանց թոյլ չէ տրւում այնտեղ երեք ամսից աւելի մնալ։

—Ինչպէս տեղեկացնում են լրագիրները, Ֆրանսիայի հարաւային մասում բողոքականութիւնը աւելի ու աւելի է տարածւում. բողոքական եկեղեցու այդ յաջողութիւնը վերագրում են կաթոլիկ եկեղեցու ֆանատիքական ուղղութեանը, որ ամեն կերպ արգելք է լինում ժողովրդի առաջադիմութեանը։

Այլ եւ այլ

Լրագերրի մէջ մի ծիծաղալի դէպք են պատմում անգրագէտ գրագիտութեան վերաբերութեամբ։ Բիգայում նորերս «ամերիկա» պիեսայի ներկայացման ժամանակ թատրոն եկաւ մի հասարակ մարդ իր կնոջ հետ. նա ուշի ուշով հետևում էր ներկայացմանը և որովհետև աֆիշայի վրայ գրած էր, թէ առաջին և երկրորդ գործողութիւնների մէջ անցնում է երկու շաբաթ, նա դարձաւ իր կնոջը և ասաց, որ նրանք գործ չունեն ներկայ եղող պարոնների հետ սպասել այստեղ երկու շաբաթ և կնոջ հետ հեռացաւ։ Ձիշտ երկու շաբաթ յետոյ նա կրկին իր կնոջ հետ ներս մտաւ թատրոն և պահանջում էր թոյլ տալ իրանց պիեսայի շարունակութիւնը լսել։ Ներկայ եղողների ծիծաղին պատասխանեց պարոնը ազմուկով և բանը հասաւ ոստիկանների միջամտութեան։

—Ճապոնիայի տէրութիւնը մտադիր է ճապոնական այբուբենի տեղ մտցնել լատինական, որ ի հարկէ կօգնէ եւրոպացիներին հեշտ ճանաչելու ճապոնական լեզւի և գրականութեան հետ։

Ստուհանդակ

Թիֆլիս. Մօսկին. Առանց մեր համաձայնութիւնը առնելու, դուք շարունակում էք ուղարկել մեզ և ներկայ 1901 թ. Մշակի։ Կարցնում ենք՝ ինչ իրաւունքով։

Երբ անցեալ տարւայ վերջը մենք պատիւ արինք ձեզ առաջարկելով վոխադարձաբար տպագրել մեր թերթերի յայտարարութիւնները, ինչպէս անում էինք նախորդ տարիները և մենք էլ չըսպասելով ձեր պատասխանին, տպագրեցինք Մշակի յայտարարութիւնը, դուք ձեր ընթերցողների աչքերում թոզ փչելու նպատակով ոռնտիմենտալութիւն համարեցիք մեր արածը և աւելի էֆէկտ թողնելու համար հրապարակաւ հրաժարւեցիք Աղբիւր-Ծարագի յայտարարութիւնը տպագրելու։ Եւ այդ բաւական չէ, ձեզ յատուկ վիրաւորական լեզւով մէկ էլ հայհոյեցիք և ասացիք, որ այսուհետև մեզ էլ էք արհամարհում, ուրիշ խօսքերով մեր անունն էլ արժան չըպէտք է դատէք Մշակում արձակ, նագրելու։

Թէ ինչ իրաւունքով տպագրեցիք Մշակի յայտարարութիւնը՝այդ կէտին մենք պատասխանեցինք։ Գալով ձեր հայհոյանքին՝արդէն բերել ենք տւել մի աշտարակցի, մի չանախչեցի և մի Ղուշեցի (կլասիկ հայհոյողներ) որոնք միայն կարող են ձեր եօթը պորտը դուրս տալ և պատասխանել ձեզ. միայն այն պայմանով որ այդ հայհոյանքները տպագրէք ձեր թերթում։ Իսկ մենք թէև չարհամարելով հայերէն լեզւով հրատարակւող և ոչ մի թերթու պարտականութիւն համարելով կարգալ այդ թերթը,քանի որ պարտականութիւններ ունինք ստանձնած, այնուամենայնիւ խնդրում ենք ապատել մեզ պատրաստականութիւնից և չուղարկել մեզ Մշակ։ Փառք Աստծոյ, վիրոցում ճախւում է այդ թերթը և օրական մի հինդ կոպէկ կարող ենք տալ և դնել։ Ձեր եանուսութիւնը, քառասուն տեսակ երես ունենալը ուրիշների մօտ ցոյց տւէք, իսկ մենք ձեզ շատ լաւ ենք ճանաչում...

Ս, Էջմիածին. ի. Փ. Վ. Ներեցէք, որ ձեր նամակին անձամբ չըպատասխանեցինք. իրաւունք ունիք, իսկ մենք չարգելի պատճառներ. այդ մի սխալ է։

Календарь
„Синяго Креста"
Общества попеченія о бѣдныхъ и больныхъ дѣтяхъ
состоящаго подъ августѣйшимъ покровительствомъ
Ея Императорскаго Высочества Великой Княгини Елисаветы Маврикіевны.
—
Справочная и адресная книга Россійской имперіи
съ картами, планами, портретами и рисунками
выйдетъ 1-го ноября 1900 года.
Цѣна въ переплетѣ 1 руб. 50 к. (съ пересылкой 2 рубля).
—
Съ требованіями обращаться въ редакцію календаря «Синяго Креста».
С.-Петерб. Сергіевская ул., д. 41.